ծունեայ մարդու անվաստակելի եռանդը: Նա գործերի մէջ չէր խառնւում. գործը, լարուած մեքենայի նման, իր կարգով շրջան էր առնում. միայն երբեմն դիմում էին նրան այս եւ այն հարցերով: Նա այդ առեւտրական տան տէրն էր եւ նրա կառավարիչը:

Նրա մօտ նստած էր մի այլ պարոն, ոտքից գլուխ սեւ հագուստի մէջ. ձեռքում պտտեցնում էր նոյնպէս սեւ, լայնեզրեայ գլխարկը, որ երբեմն գնում էր գաւազանի գլխին, փոքր-ինչ հանգստանալու համար: Այդ պարոնը նոյնպէս մօտեցել էր ծերութեան. մօրուքի եւ գլխի մազերի մէջ սեւ գոյները հազիւ էին նշմարւում: Նրա խաղաղ դէմքը, երեխայի դէմքի նման, ամէն րոպէ ժպտում էր, երբ փոքր ի շատէ ուրախացուցիչ բան էր լսում: Ինչպէս երեւում էր, նա վաճառականի հին ծանօթ էր եւ, Բաղէշից նոր եկած լինելով այդ քաղաքը, եկել էր նրան այցելութիւն անելու:

— Ներեցէ՛ք, բարեկամ, — առաջ տարաւ վաճառականը, տեղից վերկենալով եւ կրկին խրոելով մեծ բազկաթոռի մէջ, — ահա՛ իմ հագուստը ոտքից գլուխ պատրաստուած է տեղային գործուածքներից, ասացէք խնդրեմ՝ ինչո՞վ է վատ: Իրաւ է, երոպական գործուածների նրբութիւնը չունեն, բայց դրա փոխարէն աւելի դիմացկոտ են եւ էժան: Եթէ մեզանից իւրաքանչիւրը փոքր-ինչ զսպէր իրան պճնասիրութիւնից եւ բաւականանար տեղային գործուածներով, այլեւս մեր փողը Եւրոպան չէր տանի, մեր փողը մեր երկրում կը մնար:

— Միթէ՞ այնքան չէ ծախւում, — հարցրեց բաղեշցի նորեկը:

— Այժմ, պէտք է ասած, բաւական սպառւում է, — պատասխանեց վաճառականը, ձեռքը դէպի ճակատը տանելով, կարծես նոյն րոպէում կամենում էր հաշուել, արդեօք չէ՞ր սխալւում իր պատասխանի մէջ: — Բայց գիտէ՞ք, բարեկամ, թէ որքա՜ն աշխատութիւն էր պէտք, որքա՜ն զոհողութիւն էր պէտք, մինչեւ ես կարողացայ մեր հասարակութեանը ընտելացնել մեր արդիւնաբերութեան գործածութեան հետ:

Բաղեշցու դէմքի վրայ փայլեց մի սրտագին ուրախութիւն:

— Դուք այն ասացէք, — հարցրեց նա, — արտահանութիւն դէպի օտար երկրներ լինո՞ւմ է:

— Ինչպէս չէ: Մեր գործուածները այժմ տանում են Պարսկաստան, Միջին Ասիայի զանազան կողմերը, այլեւ Անդրկովկասի զանազան քաղաքները: Ահա, ես հասկանում եմ այսպիսի վաճառականութիւնը: Մինչեւ այսօր, մենք իսկապէս վաճառականներ չէինք, թէեւ մեզ վաճառական ազգ էին կո-